ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՂԱԶԱՐԵԱՆ ՄԱՐԻ ԵՂԻԱՅԻ

ՀՈՒԶԱԿԱՆ ԻՆՏԵԼԵԿՏԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԿԱՐԾՐԱՏԻՊԵՐԻ ՀԱՄԱՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԿՈԼԵԿՏԻՎՈՒՄ

ԺԹ.00.03 «Սոցիալական հոգեբանություն» մասնագիտությամբ
հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման
ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ 2025

Ատենախոսության թեման հաստատվել է Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում:

Գիտական ղեկավար՝	հոգեբանական գիտությունների թեկնածու Լիլիթ Լաչինի Լաչինյան
Պաշտոնական ընդդիմախոսներ՝	հոգեբանական գիտությունների դոկտոր Սեդրակ Աղասու Սեդրակյան
	հոգեբանական գիտությունների թեկնածու Արայիկ Ալբերտի Ֆիրյան
Առաջատար կազմակերպություն՝	ՀՀ Պետական կառավարման ակադեմիա

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2026 թ. հունվարի 14-ին ժամը 12:00-ին, Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող հոգեբանության 064 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ 0010, Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 14.12.25 թ.:

Հոգեբանության 064 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար, հոգեբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝ **Կամո Վարդանյան**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: Արդի ժամանակաշրջանում որակյալ կրթություն ստանալը, որակյալ մանկավարժներ պատրաստելը գրեթե բոլոր հասարակություններում զարգացման կարևորագույն խնդիրներից մեկն է և կմնա առաջնային խնդիրներից: Այս գործընթացում կարևորում ենք հասարակական կարծրատիպերի և մանկավարժների հուզական ինտելեկտի փոխազդեցության խնդիրը: Թեև սոցիալական կարծրատիպերի և հուզական ինտելեկտի հիմնախնդիրը քննվել են փիլիսոփայության, մշակութաբանության, հոգեբանության, սոցիոլոգիայի, լեզվաբանության ոլորտներում, այնուամենայնիվ դրանց ուսումնասիրությունը հոգեբանության մեջ ունի ոչ միայն լուսաբանման, այլև նորովի հետազոտման կարիք:

Սոցիալական կարծրատիպերի հիմնախնդրին անդրադարձել են մի շարք հեղինակներ (Durlak J., Oberle E., Taylor R., Weissberg R.), ովքեր, պայմանավորված իրենց տեսամեթոդաբանական դիրքորոշումներով, կարծրատիպերի ծագման և բնորոշման վերաբերյալ տարբեր մոտեցումներ են առաջադրել: Սակայն պետք է նշենք, որ մինչ օրս սոցիալ-հոգեբանական գիտությունների համակարգում «սոցիալական կարծրատիպ» հասկացության վերաբերյալ գոյություն չունի ընդհանրական մոտեցում: Հոգեբանական գիտության մեջ հուզական ինտելեկտի հիմնախնդրի վերաբերյալ կան բազմաթիվ հետազոտություններ և տեսություններ (D. Goleman, P. Salovey, J. Meyer, R. Boyatzis, B. Chernis, J. Durlak):

Սոցիալական կարծրատիպերը և հուզական ինտելեկտը՝ որպես երկու հոգեբանական երևույթներ, փոխկապակցված են: Սոցիալական կարծրատիպերն ազդում են հուզական ինտելեկտի վրա, իսկ հուզական ինտելեկտի մակարդակն ազդում է սոցիալական կարծրատիպերի դրսևորման վրա: Ուստի այս երկու հասկացությունների համալիր ուսումնասիրությունն առաջնային խնդիր է դրանց հարաբերակցության ուսումնասիրման համատեքստում: Ուստի, մեր կողմից իրականացված ուսումնասիրությունը կկենտրոնանա մանկավարժական կոլեկտիվում հուզական ինտելեկտի և դրա բաղադրիչների, միևնույն ժամանակ սոցիալական կարծրատիպերի դրսևորման փոխկապակցվածության վրա:

Ատենախոսությունը լիբանանյան հայ իրականության մեջ առաջին աշխատանքն է, որն ուսումնասիրում է մանկավարժական կոլեկտիվում դրսևորվող հուզական ինտելեկտի և սոցիալական կարծրատիպերի համահարաբերակցությունը: Աշխատանքում վեր են հանվել

սոցիալական կարծրատիպերի և հուզական ինտելեկտի համահարաբերակցային կապերը, ինչպես նաև արձանագրվել և բացատրվել են հուզական ինտելեկտի բարձր արտահայտվածության ազդեցության ներքո սոցիալական կարծրատիպերի նվազ դրսևորումները:

Հետազոտության նպատակն է՝ ուսումնասիրել մանկավարժական կոլեկտիվում դրսևորվող հուզական ինտելեկտի և սոցիալական կարծրատիպերի համահարաբերակցությունը:

Նպատակից ելնելով սահմանվել են հետևյալ խնդիրները՝

1. Ուսումնասիրել հուզական ինտելեկտի հիմնախնդրին նվիրված գիտական գրականություն:
2. Պարզաբանել սոցիալական կարծրատիպերի հասկացությունը, լուսաբանել սոցիալական կարծրատիպերի դրսևորման առանձնահատկությունները, սոցիալ-հոգեբանական պատճառականությունը:
3. Հետազոտել մանկավարժների շրջանում տարիքային, մասնագիտական, սոցիալական կարծրատիպերի և հուզական ինտելեկտի համահարաբերակցությունը:
4. Բացահայտել մանկավարժների հուզական ինտելեկտի ազդեցությունը սոցիալական կարծրատիպերի դրսևորման վրա:
5. Հետազոտությամբ բացահայտել մանկավարժների հուզական ինտելեկտի և սոցիալական կարծրատիպերի փոխկապակցվածությունը:
6. Վերապատրաստումից հետո իրականացնել ռեթեստավորում, կատարել արդյունքների համեմատական վերլուծություն:

Հետազոտության վարկածը: Ենթադրվում է, որ հարափոփոխվող սոցիալ-քաղաքական պայմաններում դպրոցներում աշխատանքային պայմանների, աշխատավարձի, մասնագիտական այրման ազդեցությամբ պայմանավորված մանկավարժների հուզական ինտելեկտի մակարդակը ցածր է, և այդպիսով դրսևորվում են ավելի քիչ ապրումակցման, հանդուրժողականության և սոցիալական կարծրատիպային դրսևորումների ավելի շատ արտահայտվածություն: Մասնավորապես՝

- Հուզական ինտելեկտի բարձր մակարդակ ունեցող մանկավարժները հանդուրժող են, կարեկցող և քիչ են ցուցաբերում սոցիալական կարծրատիպեր:
- Սոցիալական կարծրատիպերի դոմինանտող փոխազդեցությունը պայմանավորված է հուզական ինտելեկտի ցածր մակարդակով:

Հետազոտության օբյեկտն են հուզական ինտելեկտը և սոցիալական կարծրատիպերը:

Հետազոտության առարկան է՝ մանկավարժական կոլեկտիվում դրսևորվող հուզական ինտելեկտի և սոցիալական կարծրատիպերի համահարաբերակցությունը:

Հետազոտության տեսամեթոդաբանական հիմք են հանդիսացել գիտական աղբյուրների վերլուծությունն ու համադրությունը: Պետք է նշենք, որ հայալեզու գրականության մեջ մեր կողմից չեն գտնվել այնպիսի աշխատանքներ, որոնք ուղիղ կապ ունեին մեր աշխատանքի նպատակի և օբյեկտի հետ: Արդեն իսկ նշել ենք, որ գերակշռող ուսումնասիրությունները նվիրած էին սոցիալական կարծրատիպերին: Էմպիրիկ մեթոդների շարքում ներառվել են հարցումը՝ հեղինակային հարցարանի կիրառմամբ, որն ուղղված է մանկավարժական կոլեկտիվում դրսևորվող հուզական ինտելեկտի և սոցիալական կարծրատիպերի համահարաբերակցության բացահայտմանը:

Աշխատանքի տեսական հիմք են հանդիսացել անձի հուզական ինտելեկտի ուսումնասիրությունները՝ Դ. Գոուլման (1995), Հ. Գարդներ (1993), Ս. Մայեր (1998), Մեթյուն (2009), սոցիալական կարծրատիպերի ուսումնասիրությունները՝ Կ. Բրեյլի, Հ. Թեջֆել, Վ. Դուազ (2002)՝ մետամշակույթի ազդեցությունը կարծրատիպերի վրա՝ Ս. Գարվին, մանկավարժական կոլեկտիվում սոցիալական կարծրատիպերով պայմանավորված հարաբերություններին՝ Ջ. Տրոպման (1997):

Հետազոտության մեթոդները: Հետազոտության ընթացքում կիրառվել են տվյալների հավաքագրման, համահարաբերակցային վերլուծության և մեկնաբանման որակական և քանակական մեթոդներ՝

- Հարցազրույց,
- Թեստավորում՝
  - ✓ «Հուզական ինտելեկտի գնահատման» հարցարան (Դ. Լյուսին),
  - ✓ «Էմպատիկ ունակությունների մակարդակի» ախտորոշման մեթոդիկա (Վ. Բոյկո),
  - ✓ «Հանդուրժողականության ինդեքս» էքսպրես-հարցարան (Գ.Ու. Սոլդատովա, Օ.Ա. Կրավցովա),
  - ✓ «Հուզական ինտելեկտի» հարցարան (Ն. Հոլլ),
  - ✓ «Սոցիալական կարծրատիպեր և նախապաշարմունքներ» հարցարանի մոդիֆիկացված տարբերակը մշակված՝ Ս.Ա. Գուդվինի և համահեղինակների կողմից,
- Հարցարան՝

- ✓ «Մանկավարժների մասնագիտական ուղղվածության կարծրատիպերի գնահատման» հեղինակային հարցարան,
- ✓ «Մանկավարժների տարիքային կարծրատիպերի գնահատման» հեղինակային հարցարան,
- ✓ «Մանկավարժին բնորոշող սոցիալական կարծրատիպային պատկերացումների բացահայտման» հեղինակային հարցարան:

Հետազոտության գիտական նորույթը: Հետազոտությունը լուսաբանում է Լիբանանի կրթական համակարգի արձագանքը Բեյրութի պայթյունից և Քովիդ-19 համավարակից հետո ձևավորված իրականությանը: Հիմնական շեշտը դրված է ուսուցիչների հուզական ինտելեկտի և բարեկեցության նշանակության վրա կրթության որակի բարելավման գործընթացում: Ուսումնասիրության տվյալները ցույց են տալիս, որ բարձր հուզական ինտելեկտ ունեցող մանկավարժները ցուցաբերում են ավելի հանդուրժող և կարեկցող վերաբերմունք՝ նվազեցնելով սոցիալական կարծրատիպերի ազդեցությունը: Հետազոտությունն առաջարկում է կառուցվածքային նոր վերապատրաստման ծրագիր ուսուցիչների համար՝ ուղղված նրանց հուզական ինտելեկտի և բարեկեցության զարգացմանը:

Աշխատանքի տեսական նշանակությունը: Մշակվել են հուզական ինտելեկտի և սոցիալական կարծրատիպերի փոխկապակցության տեսական դրույթները, ինչպես նաև այն, թե ինչպես են հուզական ինտելեկտի դրսևորումները և հասարակական ընկալումները ձևավորում կրթական միջավայրը: Տեսական առումով աշխատանքն ունի նշանակալի ներդրում կրթության ոլորտում՝ առաջարկելով կիրառելի պատկերացումներ հոգեբանական և մանկավական դասընթացների համար: Ուսումնասիրությունը շեշտադրում է հուզական ինտելեկտի և սոցիալական կարծրատիպերի վերաբերյալ իրազեկվածության անհրաժեշտությունը կրթության բնագավառում՝ նպաստելով ուսուցման արդյունավետության բարձրացմանն ու հուզականորեն գրագետ կրթական միջավայրի ձևավորմանը:

Աշխատանքի կիրառական նշանակությունը: Հետազոտության գործնական նշանակությունը նրա հնարավոր գործադրությունն է կրթական և սոցիալական համատեքստում: Ուսուցիչների բարեկեցության և հուզական ինտելեկտի վերաբերյալ ստացված տեղեկությունները կարող են հիմք ծառայել հոգեբանական և մանկավարժական մեթոդների մշակման համար, որոնք նպատակաուղղված են կրթական փորձի ընդհանուր բարելավմանը:

Մասնավորապես, այս արդյունքները կարող են կարևոր դեր խաղալ այնպիսի վերապատրաստման ծրագրերի ձևավորման համար, որոնք խթանում են ավելի դրական վերաբերմունք դեպի ուսուցիչները: Հետազոտության արդյունքները կարող են կիրառվել նաև հոգեբանական խորհրդատվության համատեքստում՝ տալով արժեքավոր տեղեկություններ մանկավարժների հետ աշխատող մասնագետներին:

Պաշտպանության ներկայացվող դրույթներն են՝

1. Սոցիալական կարծրատիպային պատկերացումների և հուզական ինտելեկտի միջև առկա է փոխկապակցվածություն:
2. Մանկավարժների մոտ հուզական ինտելեկտի խթանումը հանգեցնում է անձի սոցիալական կարծրատիպային պատկերացումների դրսևորման ընթացքը:
3. Սոցիալական փոխհարաբերություններում ցածր հուզական ինտելեկտը կարող է պայմանավորել սոցիալական կարծրատիպերի առաջացումը:
4. Մանկավարժների մոտ դրսևորվող տարիքային, մասնագիտական ու սոցիալական կարծրատիպերը պայմանավորվում են նաև հուզական ինտելեկտի դրսևորումներով:

Հետազոտության արդյունքների հուսալիությունն ու հավաստիությունը հիմնավորված են հիմնախնդրին առնչվող աղբյուրների ընտրությամբ և վերլուծությամբ, հետազոտության տեսամեթոդական հիմքերի ընտրությամբ, աշխատանքի նպատակին համապատասխան խնդիրների մշակմամբ, հավաստի փորձարարական մեթոդական գործիքակազմի ընտրությամբ, ստացված արդյունքների բազմակողմանի վերլուծությամբ և մեկնաբանմամբ:

Աշխատանքի փորձարկումն ու հրապարակային քննարկումը: Կատարվել է գիտական աշխատանքների վերլուծություն (ընդհանուր 138 աղբյուր), ատենախոսության արդյունքներն արտացոլվել են 9 գիտական հրապարակումներում՝ գիտական ամսագրերում և միջազգային գիտաժողովում: Աշխատանքի առանձին դրույթներ ներկայացվել են Խ. Աբովյանի անվան ՀՄՊՀ ակադեմիկոս Մկրտիչ Մազմանյանի անվան հոգեբանության ամբիոնի նիստերում:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երկու տեսական և ուսումնասիրության մեթոդաբանության մեկ գլուխներից, եզրակացություններից, գործնական առաջարկներից, օգտագործված գրականության ցանկից, հավելվածից: Ատենախոսությունը ներառում է 18 աղյուսակ, և բաղկացած է 162 էջերից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսության ներածությունը ներառում է թեմայի արդիականությունը, հիմնախնդրի ուսումնասիրվածության աստիճանը, հետազոտության նպատակը, վարկածը, նպատակից բխող խնդիրները, օբյեկտը, առարկան, հետազոտության ընտրակազմը, մեթոդիկաները, տեսական և մեթոդաբանական հիմքերը, գիտական նորույթը, աշխատանքի տեսական և կիրառական նշանակությունը, հետազոտության փորձաքննությունը, հավաստիությունն ու հիմնավորվածությունը, պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները։

Աշխատանքի առաջին՝ «Հուզական ինտելեկտի հիմնախնդիրը ժամանակակից հոգեբանության մեջ» գլուխը բաղկացած է երեք ենթագլխից։

Ատենախոսության առաջին՝ «Հուզական ինտելեկտը հոգեբանության մեջ» ենթագլխում ներկայացված են գիտական գրականության մեջ առկա հուզական ինտելեկտի (ՀԻ) բնորոշումները, սահմանումները և դրա կարևորությունը կրթության մեջ։ ՀԻ-ն ներառում է ինքնագիտակցություն, էմոցիաների կառավարում, ապրումակցում և առողջ սոցիալական հարաբերություններ կառուցելու կարողություն։ ՀԻ-ի հմտությունները նպաստում են ոչ միայն անձի ինքնագիտակցությանը, այլև արդյունավետ սոցիալական փոխգործակցությանը։

Ատենախոսության երկրորդ՝ «Հուզական ինտելեկտի ազդեցությունը մանկավարժական կոլեկտիվում առկա փոխհարաբերություններում» ենթագլխում ներկայացված են հուզական ինտելեկտի հիմնական հայեցակարգերը։ Հուզական ինտելեկտը ոչ միայն բարելավում է մանկավարժի վարքն ու հաղորդակցման հմտությունները, այլև բարձրացնում նրանց ակադեմիական որակները։ ՀԻ-ի գործնական կիրառումը պահանջում է համակարգային և մշակութային մոտեցում՝ ընդգրկելով դպրոցների կազմակերպչական գործառույթները, ուսուցչի մասնագիտական զարգացումը և համայնքի ներգրավվածությունը։

Ատենախոսության երրորդ՝ «Հուզական ինտելեկտի կարգավորումը և դրա մեխանիզմները մանկավարժական կոլեկտիվում» ենթագլխում վերլուծվում են տեսություններ, որոնք վերաբերվում են կրթական արդյունավետ գործիքներին՝ այս հմտությունները դպրոցներում ներառելու գործընթացում։ Ներկայացված են Եվրոպայից և այլ երկրներից հավաքված լավագույն փորձառությունները և գործնական մոտեցումները, որոնք օգնում են արդյունավետորեն ուղղորդել և կազմակերպել այս հմտությունների ինտեգրումը կրթական համակարգերում։ Ներկայացնում

է նաև դրանց գործածությունից ստացված առավելությունները, որոնք կարող են ծառայել ուղեցույց գործընթացը հաջող իրականացնելիս:

Երկրորդ՝ «Սոցիալական կարծրատիպերի հիմնախնդիրը հոգեբանության մեջ» գլուխը բաղկացած է երեք ենթագլխից:

Ատենախոսության երկրորդ գլխի առաջին՝ «Սոցիալական կարծրատիպեր հասկացությունը հոգեբանական գիտական գրականության մեջ» ենթագլխում ներկայացվում է սոցիալական ստերեոտիպերի բնորոշումը, սահմանումները, տարբեր տեսություններն ու մեկնաբանությունները, ինչպես նաև սոցիալական ստերեոտիպերի արտահայտման և դրսևորման ձևերը տարբեր հասարակություններում: Դրանք ներառում են ինչպես անհատական վերաբերմունքները, այնպես էլ խմբային ներգրավվածությունները, որոնք անդրադառնում են սոցիալական հարաբերությունների և համակեցությանը:

Ատենախոսության երկրորդ գլխի երկրորդ՝ «Սոցիալական կարծրատիպերի դրսևորման արդյունքում ձևավորված փոխհարաբերությունները Լիբանանի հայկական դպրոցների օրինակով» ենթագլխում մանրամասն ներկայացվում են սոցիալական կարծրատիպերի ազդեցությունները մանկավարժական կոլեկտիվում՝ ընդգրկելով դրանց ազդեցությունն ուսուցիչների, ուսանողների և տարբեր խմբերի միջև ձևավորված հարաբերությունների վրա: Քննարկվում է, թե ինչպես են կարծրատիպերն ազդում անհատների ինքնագնահատականի, ուսումնական միջավայրի և խմբային դինամիկայի վրա:

Երրորդ՝ «Սոցիալական կարծրատիպերի դրսևորման հետևանքով ձևավորված փոխհարաբերությունները մանկավարժական կոլեկտիվում» ենթագլխում ներկայացվում է կիրառակն լավագույն մեթոդներն ու ռազմավարությունները, որոնք նպատակ ունեն նվազեցնել կարծրատիպերի բացասական ազդեցությունը, խթանել բաց և հավասարապես ընդունող կրթական միջավայրի ձևավորումը: Նշվում է նաև, որ կրթական ծրագրերում պետք է ընդգրկվեն մեթոդներ, որոնք մեծացնում են իրազեկվածությունը և տրամադրում գործիքներ կարծրատիպերի հաղթահարման համար:

Ատենախոսության երրորդ՝ «Մանկավարժական կոլեկտիվում հուզական ինտելեկտի և սոցիալական կարծրատիպերի համահարաբերակցությանն ուղղված հավաստող և ստուգող գիտափորձերի քանակական և որակական վերլուծություն» գլուխը բաղկացած է երեք ենթագլխից:

Ատենախոսության այս գլխի «Հետազոտության կազմակերպումը, մեթոդիկաները և ընտրանքը» ենթագլխում ներկայացված են

հետազոտության կազմակերպումը, մեթոդաբանական հիմքերը, ընտրանքը, մեթոդներն ու մեթոդիկաները: Հետազոտությունն անցկացվել է 2020-2024 թթ. 500 հարցաթերթիկի փորձարկումով: Ակնարկային գնահատումն իրականացվել է Լիբանանում և Հայաստանում՝ ներգրավելով 150 ուսուցչի: Լիբանանում մասնակցել են 87 կին և 17 տղամարդ ուսուցիչներ (104): Հետազոտության համար կիրառվել են հետևյալ մեթոդները՝ գիտական գրականության վերլուծության մեթոդ, հարցազրույց, ինչպես նաև հարցարաններ և մեթոդիկներ՝ «Էմպատիկ ունակությունների մակարդակի» ախտորոշման մեթոդիկա (Վ. Բոյկո), «Հանդուրժողականության ինդեքս» էքսպրես-հարցարան (Գ.Ու. Սոլդատովա, Օ.Ա. Կրավցովա), «Հուզական ինտելեկտի» հարցարան (Ն. Հոլլ), «Սոցիալական կարծրատիպեր և նախապաշարմունքներ» հարցարանի մոդիֆիկացված տարբերակը, որը մշակվել է Ս.Ա. Գուդվինի և համահեղինակների կողմից, «Մանկավարժների մասնագիտական ուղղվածության կարծրատիպերի գնահատման» հեղինակային հարցարան, «Մանկավարժների տարիքային կարծրատիպերի գնահատման» հեղինակային հարցարան, «Մանկավարժին բնորոշող սոցիալական կարծրատիպային պատկերացումների բացահայտման» հեղինակային հարցարան: Իրականացվել են հոգեախտորոշիչ հետազոտություններ, ապա տվյալների նկարագրման և վիճակագրական վերլուծություն, համահարաբերակցային վերլուծություններ, ինչի հիման վրա տրվել են եզրակացություններ և առաջարկություններ:

Հետազոտության երկրորդ՝ «Ստացված արդյունքների վերլուծություն» ենթագլխում ներկայացվել են ստացված արդյունքները:

Հոլի «Հուզական ինտելեկտի գնահատման» մեթոդիկայի արդյունքում ստացել ենք հետևյալ տվյալները (տես՝ աղյուսակ 1):

	Զգացմունքային իրազեկվածություն	Հույզերի վերահսկողություն	ինքնակառավարում	Այլ մարդկանց զգացմունքների հասկացում	Ապրումակցում
բարձր	67	59	56	59	22
միջին	15	22	16	22	32
ցածր	18	19	28	19	46

Աղյուսակ 1. Մանկավարժների հուզական ինտելեկտի բաղադրիչների արտահայտվածության մակարդակները (%)

Հետազոտության արդյունքները ցույց տվեցին, որ մանկավարժների մեծամասնությունն ունի հուզական ինտելեկտի բարձր մակարդակ՝ հատկապես զգացմունքային իրազեկվածության, հույզերի վերահսկման,

ինքնակառավարման և ուրիշների հույզերի ըմբռնման ոլորտներում: Սակայն ապրումակցման կարողությունը նրանց շրջանում համեմատաբար թույլ է արտահայտված՝ միայն 22%-ը ցուցաբերեց բարձր մակարդակ, իսկ մեծամասնությունը՝ միջին կամ ցածր: Սա ցույց է տալիս, որ մանկավարժները հասկանում են ուրիշների հույզերը, բայց դժվարանում են ներքուստ համակրել և կիսել դրանք:

Վ. Բոյկոյի մեթոդիկայի արդյունքները ցույց տվեցին, որ հետազոտվողների էմպատիկ ունակությունները հիմնականում գտնվում են միջին մակարդակում՝ ինտուիտիվ և զգացմունքային ապրումակցման ոլորտներում թույլ դրսևորվելով: Էմպատիկ կարողություններն առավել զարգացած են ճանաչողական և ռացիոնալ ոլորտներում, ինչն ապահովում է զգացմունքների վերահսկողություն և մասնագիտական հավասարակշռվածություն, սակայն կարող է դժվարացնել շփումները:

Էմպատիկ ունակության բաղադրիչ	Շատ ցածր	Ցածր	Միջին	Բարձր	Շատ բարձր
Ինտուիտիվ ապրումակցում	28 (26.9%)	41 (39.4%)	25 (24.0%)	8 (7.7%)	2 (1.9%)
Զգացմունքային ապրումակցում	24 (23.1%)	38 (36.5%)	27 (26.0%)	11 (10.6%)	4 (3.8%)
Ներթափանցողականություն	9 (8.7%)	18 (17.3%)	47 (45.2%)	21 (20.2%)	9 (8.6%)
Ինքնակառավարում	7 (6.7%)	16 (15.4%)	49 (47.1%)	23 (22.1%)	9 (8.7%)
Նույնականացում	5 (4.8%)	12 (11.5%)	31 (29.8%)	38 (36.5%)	18 (17.4%)
Ռացիոնալ ապրումակցում	4 (3.8%)	10 (9.6%)	29 (27.9%)	41 (39.4%)	20 (19.2%)

Աղյուսակ 2. Վ. Բոյկոյի մեթոդիկայի արդյունքները (%)

Լյուսինի «Հուզական ինտելեկտի գնահատման» հարցարանի վերլուծության արդյունքում պարզ դարձավ, որ հետազոտվողների մեջ առավել զարգացած են՝ սեփական հույզերի ըմբռնումը (12.4) և դրանց արտահայտման հսկումը (18.2), սակայն թույլ են սոցիալական հմտությունները՝ հատկապես ուրիշների հույզերը ճանաչելու (8.1), կառավարելու (9.2) և սեփական հույզերը կառավարելու (8.99) ունակությունները: Սա վկայում է այն մասին, որ հետազոտվողներն ունեն դժվարություններ ինչպես իրենց, այնպես էլ ուրիշների հույզերն արդյունավետ կարգավորելու հարցում՝ նշելով հուզական ինտելեկտի նպատակային զարգացման անհրաժեշտությունը:

	Շատ ցածր <10	ցածր 11-30	միջին 31-70	բարձր 71-90	Շատ բարձր 91+
MP (Այլ մարդկանց հույզերի ընկալում)	8.1	-	-	-	-
MU (Այլ մարդկանց հույզերի կառավարում)	9.2	-	-	-	-
VP (Սեփական հույզերի ըմբռնում)	-	12.4	-	-	-
VU (Սեփական հույզերի կառավարում)	8.99	-	-	-	-
VE (Հույզերի դրսևորման վերահսկում)	-	18.2	-	-	-

Աղյուսակ 3. Լյուսինի «Հուզական ինտելեկտի գնահատման» հարցարանի արդյունքները

«Հանդուրժողականության ինդեքս» էքսպրես-հարցարանի արդյունքների համաձայն դասավանդման 10 տարվա կամ ավելի քիչ փորձ ունեցող մասնակիցները դրսևորել են հանդուրժողականության ցածր մակարդակ: Նույն արդյունքը գրանցել են նաև 10-20 տարի կամ ավելի երկար դասավանդման փորձ ունեցողները: Կանանց և տղամարդկանց տվյալների համեմատական վերլուծության արդյունքում պարզվեց, որ կանանց մոտ հանդուրժողականության ցուցանիշը միջին մակարդակում է: Հանդուրժողականության մակարդակը չափվել է՝ հաշվի առնելով նաև մասնակիցների տարիքը: Պարզվել է, որ 25-40 տարեկան ուսուցիչները դրսևորել են հանդուրժողականության միջին մակարդակ՝ ի համեմատ 25-ից ցածր և 40 տարեկանից բարձր տարիքի ուսուցիչների: Հանդուրժողականության ընդհանուր մակարդակը տղամարդկանց և կանանց տարբեր տարիքային խմբերում ցածր էր կամ միջին:

Ցուցանիշներ	Կանայք	Տղամարդիկ
Հանդուրժողականությունը որպես անձի հատկություն	30	25
Սոցիալական հանդուրժողականություն	35	35
Էթնիկ հանդուրժողականություն	32	28

Աղյուսակ 4. Հանդուրժողականության ինդեքս» էքսպրես-հարցարանի հանդուրժողականության ասպեկտներ

Կարևորում ենք առանձնացնել տղամարդ ուսուցիչների բարձր ցուցիչները բոլոր կարծրատիպերի տեսակների մեջ: Տղամարդիկ ունեն նշանակալիորեն բարձր կամ միջին ցուցիչներ կանանց համեմատ: Տվյալները համահունչ են հոգեբանության հետազոտությունների հետ, որոնք ցույց են տալիս, որ տղամարդիկ հակված են ավելի բացահայտ արտահայտել սոցիալական կարծրատիպեր, մինչդեռ կանայք ցուցաբերում են ավելի մեծ սոցիալական ցանկալիություն:

Տարիքային վերլուծությունը բացահայտում է հետաքրքիր միտում. կարծրատիպերի աստիճանն աճում է տարիքի հետ, հատկապես տղամարդկանց մոտ: Ամենաբարձր ցուցիչները 60-ից բարձր տարիքային խմբում են (2.78 ± 0.72), ամենացածը՝ ≤25 տարեկան կանանց (2.46 ± 0.58):

Այս փաստը կարող է բացատրվել մի քանի գործոններով՝

- Ավելի տարեց սերնդի սոցիալականացումն ավելի ռիգիդ սոցիալական նորմերի պայմաններում,
- կրթական համակարգի արդիականացման ազդեցությունը երիտասարդ ուսուցիչների վրա:

Գենդերային կարծրատիպերն ունեն ամենաբարձր միջին ցուցիչը (2.78 ± 0.72), որին հետևում են էթնիկ կարծրատիպերը (2.65 ± 0.69): Մասնագիտական կարծրատիպերը ցուցաբերում են ամենացածր արժեքները (2.32 ± 0.58): Մասնագիտական կարծրատիպերի ցածր մակարդակը կարող է ցույց տալ, որ ուսուցիչները՝ որպես մասնագիտական խումբ, ավելի գիտակցված են մասնագիտական կարողությունների գնահատման հարցում:

Մանկավարժների կարծրատիպերի գնահատման հեղինակային հարցարանների կիրառության արդյունքում բացահայտվեց, որ 40-60 տարեկան ուսուցիչները դրսևորում են կարծրատիպերի ամենաբարձր մակարդակը: Իսկ կարծրատիպերի միջին մակարդակը առավել պայմանավորված էր նոր և փորձառու ուսուցիչների մեծ թվով:

Ցուցիչներ / Խմբեր	20–30 տ.	30–40 տ.	40–60 տ.	60+ տ.	Փորձ մինչ 10 տ.	Փորձ 10–20 տ.	Փորձ 25+ տ.
Տարիքային կարծրատիպեր	3	3	4	4	1	3	4
Սոցիալական կարծրատիպեր	3	2	4	4	1	2	4
Մասնագիտական կարծրատիպեր	3	3	4	4	1	3	4
Ընդհանուր մակարդակ	3	2	4	4	1	2	4

Աղյուսակ 5. Կարծրատիպերի դրսևորումների քանակական մակարդակը մանկավարժների մոտ ըստ տարիքային խմբի և փորձի

Ստացված տվյալների վերլուծությունը ցույց է տալիս, որ մանկավարժների շրջանում կարծրատիպային վերաբերմունքը զգալիորեն տարբերվում է տարիքային խմբերի և մասնագիտական փորձի մակարդակների համեմատությամբ: Երիտասարդ ուսուցիչները (20–30 տարեկան) և մինչև 10 տարվա աշխատանքային փորձ ունեցողները դրսևորում են ցածրից միջին կարծրատիպայնություն՝ պայմանավորված մտածողության ճկունությամբ: 30–40 տարիքային խմբում նկատվում է կարծրատիպերի որոշակի նվազում, մինչդեռ 40–60 տարեկան և 60-ից բարձր տարիքի ուսուցիչները, ինչպես նաև 25 և ավելի տարվա փորձ ունեցողները, դրսևորում են կարծրատիպայնության ամենաբարձր մակարդակները: Սա կապված է մասնագիտական ինքնության կայունացման, փորձի և սոցիալական պահպանողականության հետ:

Հետազոտության արդյունքները ցույց տվեցին, որ հուզական ինտելեկտի տարբեր բաղադրիչներն ու ապրումակցումը բարձր փոխկապակցվածություն ունեն՝ հաստատելով, որ հուզական ինտելեկտը միատարր հոգեբանական կառուց է: Ապրումակցման և հուզական

ինտելեկտի միջև հայտնաբերված միջին ուժգնության դրական կապը ($r = .548$, $p \leq 0.01$) ցույց է տալիս, որ մանկավարժի կարողությունը հասկանալու և կիսելու ուրիշի ապրումը զգալիորեն ազդում է հուզական ինտելեկտի վրա: Բարձր հուզական ինտելեկտ ունեցող ուսուցիչները հակված են ավելի ճկուն և ոչ կարծրատիպային մտածողության՝ շնորհիվ իրենց զարգացած ապրումակցման ունակությունների:

Հետազոտության երրորդ՝ «Համահարաբերակցային կապերի վերլուծություն» ենթագլխում իրականացրել ենք հուզական ինտելեկտի և սոցիալական կարծրատիպերի միջև համահարաբերակցային լրացուցիչ ուսումնասիրություն:

Փոփոխականներ	Pearson Correlation	Sig. (1-tailed)	N
Հոլ –Հուզ. ինտելեկտ Բոյկո – Ապրումակցում	.548**	.000	104
Հոլ – Հուզ. ինտելեկտ Լյուսին – Հուզ. Ինտելեկտ	.694**	.000	104

$p \leq 0,05$; $^{**}p \leq 0,01$; $^{***}p \leq 0,001$

Աղյուսակ 6. Հոլ՝ հուզական ինտելեկտ, Բոյկո՝ ապրումակցում, Լյուսին՝ հուզական ինտելեկտ բնութագրիչների միջև համահարաբերակցության մատրիցա

Ստացված արդյունքները ցույց տվեցին, որ հուզական ինտելեկտի տարբեր բաղադրիչները (Հոլ, Լյուսին) և ապրումակցման ցուցիչն (Բոյկո) ունեն բարձր և նշանակալի փոխկապակցվածություն: Դա վկայում է, որ հուզական ինտելեկտը համընդհանուր հոգեբանական կառուց է, որը պահպանում է իր ներքին ամբողջականությունը: Ապրումակցման և հուզական ինտելեկտի միջև միջին ուժգնության կապն ($r = .548$, $p \leq 0.01$) ընդգծում է, որ մանկավարժի կարողությունը՝ հասկանալու և կիսելու ուրիշի ապրումները, պայմանավորում է նրա հուզական ինտելեկտի մակարդակը: Ուստի, մանկավարժական պրակտիկայի համար սոցիալական կարծրատիպերի հաղթահարման և կանխարգելման հիմնական գործոններից է զարգացած հուզական ինտելեկտը:

Արդյունքները ցույց են տալիս, որ հուզական ինտելեկտի բոլոր բաղադրիչները և դրա ամբողջական ցուցիչներն ունեն բացասական կապ հանդուրժողականության հետ: Չնայած բացասական ուղղվածությանը, Pearson-ի համահարաբերակցային գործակիցները գտնվում են թույլ ինտենսիվության տիրույթում ($r = -0.055$-ից մինչև -0.142): Ստացված կապերը վիճակագրորեն նշանակալի չեն ($p > 0.05$), ինչը վկայում է այն մասին, որ հետազոտված ընտրանքում հուզական ինտելեկտի և սոցիալական կարծրատիպերի միջև ուղիղ կախվածություն չի արձանագրվել: Դա կարող է բացատրվել նրանով, որ հուզական

ինտելեկտը միջանձնային փոխհարաբերությունների կարգավորման գործոն է, մինչդեռ կարծրատիպերը պայմանավորված են սոցիալ-մշակութային գործոններով: Հուզական ինտելեկտը զգալի կանխատեսող գործոն չի հանդիսանում կարծրատիպային վերաբերմունքի համար, սակայն որոշ բացասական ուղղվածություն նկատվում է, ինչը հուշում է, որ դրա զարգացումը կարող է նպաստել կարծրատիպերի մեղմացմանը: Հիմնական բացահայտումներն են՝ հուզական ինտելեկտի և ուսուցչի ծագման հետ կապված կարծրատիպերի միջև նշանակալի կապ չի հայտնաբերվել, հուզական ինտելեկտի և ուսուցչի տարիքի հետ կապված կարծրատիպերի միջև հայտնաբերվել է նշանակալի, բացասական կապ, հուզական ինտելեկտի և ուսուցչի մասնագիտության հետ կապված կարծրատիպերի միջև ևս առկա է նշանակալի, բացասական և միջինից բարձր ուժգնությամբ կապ:

Այսպիսով, հաստատվում է, որ հուզական ինտելեկտը որոշ դեպքերում կարող է կապված լինել սոցիալական կարծրատիպերի նվազման հետ, սակայն ընդհանուր առմամբ անհրաժեշտ է համալիր մոտեցում՝ ներառելով հուզական, կոգնիտիվ և մշակութային գործոններ:

	Ուսուցչի մասնագիտական կարծրատիպ	Կարծրատիպ տարիքի հետ կապված	Կարծրատիպ մասնագիտութ. հետ կապված
Հոլ՝ հուզական ինտելեկտ	-.061	-.516	-.405
	.296	.000	.000
	104	104	104
Լյուսին՝ հուզական ինտելեկտ	-.112	-.354	-.495
	.162	.001	.000
	104	104	104

Աղյուսակ 7. Հոլ՝ հուզական ինտելեկտ, Լյուսին՝ հուզական ինտելեկտ և սոցիալական կարծրատիպերի միջև համահարաբերակցության մատրիցա

Պիրսոնի բանաձևի միջոցով հետազոտության արդյունքների վերլուծությունը ցույց տվեց, որ Բոյկոյի ապրումակցման և ուսուցչների հասարակական կարծրատիպերի միջև նշանակալի կապ չկա. $r = -.07$, $p = .276$ (մի կողմանի): Այսպիսով, ենթադրությունը, որը նշում է, որ կա բացասական կապ Բոյկոյի ապրումակցման և ուսուցչների հասարակական կարծրատիպերի միջև, չի հաստատվել: Բոյկոյի՝ ապրումակցման և ուսուցչների տարիքի հետ կապված հասարակական կարծրատիպերի միջև կան նշանակալի, բացասական և փոքրից միջին կապեր. $r = -.20$, $p = .042$ (մի կողմանի): Ենթադրությունը, որ կա բացասական կապ Բոյկոյի՝ ապրումակցման և ուսուցչների տարիքով կապված հասարակական կարծրատիպերի միջև, հաստատվել է:

Պիրսոնի բանաձևի միջոցով հետազոտության արդյունքների վերլուծությունը ցույց տվեց, որ Բոյկոյի՝ ապրումակցման և ուսուցչների մասնագիտության հետ կապված հասարակական կարծրատիպերի միջև կան նշանակալի, բացասական և միջինից մեծ կապեր. $r = -.46$, $p < .001$ (մի կողմանի)։ Ենթադրությունը, որ կա բացասական կապ ապրումակցման և ուսուցչների մասնագիտության հետ կապված հասարակական կարծրատիպերի միջև, հաստատվել է։

Հետազոտության Չորրորդ՝ «Փորձարարական հետազոտության վերլուծություն» ենթագլխում ներկայացված են Լիբանանի հայկական դպրոցներում իրականացված փորձարարական հետազոտության հիմնական արդյունքներն ու վերապատրաստման ազդեցությունը ուսուցիչների հուզական ինտելեկտի, ապրումակցման, հանդուրժողականության և սոցիալական կարծրատիպերի ընկալման վրա։ Վերապատրաստումից առաջ ուսուցիչների մեծամասնության մոտ արձանագրվել էր ապրումակցման, հուզական ինքնակառավարման և այլոց զգացմունքներն ընկալելու ցածր մակարդակ։ Տարիքով ավագ խմբերում՝ հատկապես 40-60 տարեկանում, առավել բարձր էին սոցիալական կարծրատիպերը։ Վերապատրաստումից հետո ապրումակցման մակարդակը զգալիորեն բարձրացել է. «ցածր» մակարդակը նվազել 46%-ից մինչև 3.9%, իսկ «բարձր» մակարդակը՝ աճել 47.1%։ Հույզերի վերահսկողություն, ինքնակառավարում և զգացմունքային իրազեկվածություն ոլորտներում նույնպես արձանագրվեցին դրական տեղաշարժեր։ Ռացիոնալ և բնազդային ապրումակցման ձևերն աճել են՝ զարգացնելով ուսուցիչների՝ շրջապատի զգացումները ճանաչելու և հասկանալու կարողությունը։ Սոցիալական կարծրատիպերի մակարդակը նվազել է՝ (40-60 տարեկան կանայք, 20-30 տարվա աշխատանքային փորձով)։ Վերլուծությունը ցույց տվեց, որ հուզական ինտելեկտի զարգացումը սերտորեն կապված է նաև հանդուրժողականության, ինչպես նաև մոտիվացիայի բարձրացման հետ, ինչպես նաև մոտիվացիայի որոշակի անկում է նկատվել՝ պայմանավորված սոցիալ-տնտեսական ծանր իրավիճակով և ուսուցիչների հուզական «սպառվածությամբ»։

Ռեթեստավորման արդյունքում պարզ դարձավ, որ վերապատրաստումը նպաստել է ուսուցիչների ինքնագիտակցության, հուզական կարգավորման, ինչպես նաև սոցիալական հմտությունների բարելավմանը։ Հանդուրժողականության մակարդակում փոփոխություն չի գրանցվել, սակայն որոշ խմբերում դիտվել է դրական տեղաշարժ։

Եզրակացություններ

1. Լիբանանի մանկավարժներին բնորոշ են մոտիվացիայի անկումը, պայմանավորված՝ հուզական «հյուծվածությամբ», մասնագիտական գործունեության «սպառվածությամբ», քանի որ ստիպված են եղել երկար ժամանակ տոկունություն ցուցաբերել համաճարակին, պատերազմին և Բեյրութի պայթյունին դիմակայելու համար:

2. Մանկավարժների ապրումակցման, հուզական ինտելեկտի և հասարակական կարծրատիպերի միջև առկա է հակադարձ կորելյացիոն կապ: Հուզական ինտելեկտի բարձր աստիճան ունեցող մանկավարժների մոտ առկա է սոցիալական կարծրատիպերի դրսևորման ցածր մակարդակ:

3. Մանկավարժներին բնորոշ են ապրումակցման միջինին դրսևորումները՝ 56 %, ուրիշների հույզերը հասկանալու, սեփական հույզերը հասկանալու, սեփական հույզերը կարգավորելու և հույզերը վերահսկելու ցածր և շատ ցածր դրսևորումները:

4. Մանկավարժների հուզական ինտելեկտի և սոցիալական կարծրատիպերի միջև առկա կապը ցույց է տալիս, որ այն ուսուցիչները, ովքեր ունեին ամենացածր սոցիալական հմտությունները, դրսևորում են ամենացածր հանդուրժողականությունն այլոց նկատմամբ՝ անկախ սեռից, մասնագիտությունից կամ տարիքից:

5. Մանկավարժների հուզական ինտելեկտի, տարիքով և մասնագիտությամբ պայմանավորված սոցիալական կարծրատիպերի միջև առկա է բացասական կապ. որքան բարձր է հուզական ինտելեկտը, այնքան տարիքով, մասնագիտությամբ պայմանավորված սոցիալական կարծրատիպերի դրսևորումները ցածր են:

6. Մանկավարժների հանդուրժողականության և մասնագիտությամբ պայմանավորված հասարակական կարծրատիպերի միջև առկա է դրական կապ: Կին մանկավարժներին բնորոշ են հանդուրժողականության բարձր դրսևորումներ: 25-40 տարեկան ուսուցիչներն ունեն միջին հանդուրժողականություն, մինչդեռ 40 և ավելի տարիքի մանկավարժները՝ ցածր հանդուրժողականության դրսևորումներ:

7. Սոցիալական կարծրատիպերի ամենաբարձր մակարդակը դրսևորում են 40–60 տարեկան մանկավարժները: Քսանհինգ և ավելի տարվա փորձ ունեցող մանկավարժներն ունեին դիմացինի հանդեպ բարյացակամություն ցուցաբերելու, հանդուրժելու ցածր մակարդակ, հատկապես տարիքով պայմանավորված:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի կողմից հրատարակված հետևյալ հրապարակումներում՝

1. Latchinyan, L., & Ghazarian, M. (2024). The problem of social stereotypes in the Lebanese educational system. Annali d'Italia, (52). p. 104-107. https://annaliditalia.net. ISSN 3572-2436.
2. Ghazarian, M. (2024). Shaping social-emotional learning skills of teachers in Armenian schools in Lebanon and Armenia. Scientific Artsakh Pedagogy, p. 102-116. UDC 373.5:316.62:378.014(479), https://doi.org/10.52063/25792652-2024.2.21-102
3. Latchinyan, L., & Ghazarian, M. (2024). Analysis of effectiveness of psychological support programs to civilians during and after war in Lebanon and Artsakh. Main Issues of Pedagogy and Psychology, 11(1), p. 29-43.
4. Latchinyan, L., & Ghazarian, M. (2025). The connection between empathy and social stereotypes among education professionals. Main Issues of Pedagogy and Psychology, 12(1), p. 38-58. ISSN 1829-1295 (print), ISSN 2953-7878 (online).
5. Latchinyan, L., & Ghazarian, M. (2025). Social stereotypes in Armenian schools in Lebanon. InPACT 2025: International Psychological Applications Conference and Trends, Budapest, Hungary, p. 511-515. ISBN 978-989-35728-4-9. ISSN 2184-2205 (print), ISSN 2184-3414 (online).
6. Ghazarian, M. (2025). Influence of emotional intelligence enhancement on the social stereotypical perceptions of educators. Scientific Artsakh Pedagogy, 1(24), p. 211-221. https://doi.org/10.52063/25792652-2025.1.24-211
7. Ghazarian, M. (2024). Promoting mental health & emotional well-being inside classrooms. The Academic Network for Development Dialogue (ANDD) Paper Series, 2nd ed., p. 201-223. https://lnkd.in/gpWu7uBM. Online ISSN 3006-4570, ISSN 3006-4562.
8. Ghazarian, M. Y. (2025). Characteristics of emotional intelligence of teachers in Lebanese pedagogical institutions. Գիտական տեղեկագիր, No. 1(48), Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ, Երևան, էջ 174–188. http://scientificnews.aspu.am. https://doi.org/10.24234/scientific.v1i48.202
9. Latchinyan, L., Majdalany, D., & Ghazarian, M. (2025, September). The interconnection between emotional intelligence and social stereotypes among education professionals. Katchar /Academia: Social Science Periodical, 2025(2), p. 33-47.

ГАЗАРЯН МАРИЯ ЕГИЯ

ВЗАИМОСВЯЗЬ МЕЖДУ ЭМОЦИОНАЛЬНЫМ ИНТЕЛЛЕКТОМ И СОЦИАЛЬНЫМИ СТЕРЕОТИПАМИ В ПЕДАГОГИЧЕСКОМ КОЛЛЕКТИВЕ

Диссертация на соискание ученой степени кандидата психологических наук по специальности 19.00.03 – «Социальная психология». Защита диссертации состоится 14 января 2025 года в 12:00 на заседании Научного совета по присуждению ученых степеней НЦСП 064 в Армянском государственном педагогическом университете имени Х. Абовяна (Тиграна Мец 17, 0010, Ереван).

АННОТАЦИЯ

Актуальность исследования. Проблематика социальных стереотипов и эмоционального интеллекта рассматривалась в философии, культурологии, психологии, социологии и лингвистике, однако их изучение в контексте психологии требует нового подхода. В педагогическом коллективе взаимосвязь эмоционального интеллекта и его компонентов с проявлениями социальных стереотипов до сих пор не исследовалась. С этой точки зрения в исследовании рассматриваются проявления социальных стереотипов в педагогическом коллективе армян Ливана, уровень эмоционального интеллекта учителей и их взаимосвязь.

Цель исследования: Изучить взаимосвязь между проявлениями эмоционального интеллекта и социальных стереотипов в педагогическом коллективе.

Задачи исследования:

1. Изучить научную литературу, посвящённую проблеме эмоционального интеллекта.
2. Уточнить дефиниции понятия «социальный стереотип», проанализировать особенности его проявления и социально-психологическую детерминацию.
3. Исследовать взаимосвязь возрастных, профессиональных и социальных стереотипов с уровнем эмоционального интеллекта среди педагогов.
4. Выявить влияние эмоционального интеллекта педагогов на проявления социальных стереотипов.
5. Определить степень взаимосвязи между эмоциональным интеллектом и социальными стереотипами педагогов.
6. После проведения программы повышения квалификации осуществить повторное тестирование и провести сравнительный анализ полученных результатов.

Гипотеза исследования: Предполагается, что в условиях изменяющихся социально-политических реалий, под воздействием факторов

рабочих условий, заработной платы и профессионального выгорания уровень эмоционального интеллекта педагогов снижен, вследствие чего проявляются меньшая эмпатия, терпимость и более выраженные социальные стереотипы.

В частности:

- Педагоги с высоким уровнем эмоционального интеллекта более терпимы, эмпатичны и в меньшей степени проявляют социальные стереотипы.
- Доминирование социальных стереотипов обусловлено низким уровнем эмоционального интеллекта.

Научная новизна исследования: Исследование освещает реакцию системы образования Ливана на новую социальную реальность, сложившуюся после взрыва в Бейруте и пандемии COVID-19. Основное внимание уделено значению эмоционального интеллекта и благополучия учителей в процессе повышения качества образования. Полученные данные показывают, что педагоги с высоким уровнем эмоционального интеллекта проявляют более терпимое и сочувственное отношение, снижая влияние социальных стереотипов. Исследование предлагает новую структурную программу профессиональной подготовки учителей, направленную на развитие их эмоционального интеллекта и благополучия.

Теоретическая и практическая значимость исследования: Разработаны теоретические положения, раскрывающие взаимосвязь между эмоциональным интеллектом и социальными стереотипами, а также показано, каким образом проявления эмоционального интеллекта и общественные восприятия формируют образовательную среду. Исследование подчёркивает необходимость повышения осведомлённости об эмоциональном интеллекте и социальных стереотипах в сфере образования, что способствует росту эффективности обучения и созданию эмоционально грамотной образовательной атмосферы. Полученные сведения об эмоциональном интеллекте и благополучии педагогов могут служить основой для разработки психологических и педагогических методик, направленных на общее улучшение образовательного опыта. Результаты исследования могут сыграть важную роль в создании программ повышения квалификации, способствующих формированию более позитивного отношения к профессии учителя.

Надёжность и гласность исследования: Надёжность обеспечивается анализом 138 современных научных работ. Результаты диссертации опубликованы в десяти научных статьях и обсуждены на кафедре психологии имени академика М. Мазманяна в АГПУ.

Структура диссертации: Работа состоит из введения, трёх глав, выводов и рекомендаций, списка литературы и приложений.

GHAZARIAN MARY YEGHIA

THE RELATIONSHIP BETWEEN EMOTIONAL INTELLIGENCE AND SOCIAL STEREOTYPES IN AN EDUCATIONAL COLLECTIVE

Dissertation for the Degree of Candidate of Psychological Sciences in the specialty 19.00.03 - "Social Psychology". The dissertation defense will take place on january 14, 2025, at 12:00, at HESC 064 Degree-awarding Scientific Council session, at the Armenian State Pedagogical University named after Kh. Abovyan (17 Tigran Mets, 0010, Yerevan).

ABSTRACT

The relevance of the research: The issue of social stereotypes and emotional intelligence has been examined in the fields of philosophy, cultural studies, psychology, sociology, and linguistics; nevertheless, its investigation within psychology requires renewed research. The interrelation between emotional intelligence and its components, as well as the manifestations of social stereotypes within a pedagogical collective, has not yet been studied. From this perspective, the present research examines the social stereotypes manifested in the pedagogical collective in the Lebanese-Armenian context, teachers' emotional intelligence, and their interrelation.

The aim of the study is to explore the correlation between emotional intelligence and the social stereotypes manifested within the pedagogical collective.

Research Objectives:

1. To study the scientific literature devoted to the problem of emotional intelligence.

2. To clarify the concept of social stereotypes and highlight the characteristics of their manifestation and their socio-psychological causality.

3. To examine the correlation between age-related, professional, and social stereotypes and emotional intelligence among teachers.

4. To identify the influence of teachers' emotional intelligence on the manifestation of social stereotypes.

5. To reveal the interrelation between teachers' emotional intelligence and social stereotypes through empirical research.

6. To conduct a retest after the training and perform a comparative analysis of the results.

Research Hypothesis: It is assumed that in rapidly changing socio-political conditions, due to factors such as working conditions in schools, salary issues, and the impact of professional burnout, teachers' level of emotional intelligence is low,

which results in reduced empathy and tolerance, as well as a stronger manifestation of social stereotypes. Specifically:

• Teachers with a high level of emotional intelligence are more tolerant, empathetic, and less likely to display social stereotypes.

• The dominant influence of social stereotypes is conditioned by a low level of emotional intelligence.

Scientific Novelty of the Research:

The study highlights the response of Lebanon's educational system to the realities shaped after the Beirut explosion and the COVID-19 pandemic. The main emphasis is placed on the significance of teachers' emotional intelligence and well-being in the process of improving the quality of education. The research data show that teachers with high emotional intelligence demonstrate more tolerant and empathetic attitudes, thereby reducing the influence of social stereotypes. The study proposes a newly structured training program for teachers aimed at developing their emotional intelligence and well-being.

Theoretical and Practical Significance of the Research:

Theoretical principles concerning the interrelation between emotional intelligence and social stereotypes have been developed, along with an exploration of how manifestations of emotional intelligence and public perceptions shape the educational environment. The study underscores the necessity of raising awareness about emotional intelligence and social stereotypes in the field of education, thereby contributing to enhanced teaching effectiveness and the creation of an emotionally literate educational atmosphere. The information obtained regarding teachers' well-being and emotional intelligence can serve as a basis for developing psychological and pedagogical methods aimed at improving overall educational practice. The results may play an important role in designing training programs that promote a more positive attitude toward teachers.

Reliability and Publicity of the Research: The reliability of the study is ensured by the analysis of 138 scholarly works by contemporary researchers. The dissertation findings have been published in ten academic articles and discussed at the Department of Psychology named after Academician M. Mazmanyan at ASPU.

Structure of the Dissertation: The work consists of an introduction, three chapters, conclusions and recommendations, a list of references, and appendices.